Զ–րդ ժամաւ հասեալ ի չէնն Հավսա հանգեաք ի պանտոկսն նոյնասարաս քան զՊուրզազ։

Եւ Եշի աւուր (22 Մարտ) ելեալ անտի հասաք ի մեծ քաղաքն Էտրէնէ, չորրորդ ժամաւ քանակաւ որ լինէր իՋևանս Զ ընդ աւուրքք և ժամս լինէր միանգամայն Ա և Դ։ Եւ յորժամ մտաք ի քաղաք, և ահա՛ ելանէր բանակ ամենայն արհեստաւորաց՝ թէ ի պատերազմ երթիցեն։ Եւ էր պատճառ պատերազմին [սո]վորական այս. քանզի արհեստ էր վէզիրին հիւանդանալ յորժամ և կամէրն, և այժմ հիւանդացեալ էր. եւ ի գալստեանն արքայի առ նա՝ ասէ ցարքայ. Դի՛տ քեզ գործակալ եւ տէր կնքոյդ։ Եւ ասէ արքայ. Զո՞ գիտեմ բաց ի քէն։ Եւ նա ասէ. Ո՛վ առիւծ իմ, արդ օր մահուան իմոյ հասեալ է, զիա՞րդ ասես զիս գիտել։ Եւ հարցանէր նմա, և վէզիրն ասէ. Դու գիտես, ի չափ հասեալ ես, զո՛ կամիս՝ այն է վէզիրն քո։ Եւ գնացեալ արքայի առ մայրն ի խորհուրդ, եւ մայրն զիւրն կամէր՝ զԱլի քէհեա։ Եւ հարցեալ վէզիրն առ թագաւորն և ուսեալ ի նմանէ զայն, ի նոյն աւուրսն արար հրաման զօրաց, ԺԸ օտա եէնկիչէրոց եւ զլուխ զօրուն արար զԱլի քէհեա, եւ հրամայեաց փոյթ ընդ փոյթ զի երթիցեն։ Եւ յաւուր Եշի՝ Մարտի ԻԹ՝ արար ալայ սէրէսքէր, և երկիր եպագ թագաւորին և վէզիրին, և երթայր ի բանակ, նստէր հանդէպ քաղաքին։

Եւ ի միւսում Եշոջ՝ Ե Ապրիլի՝ ել ամենայն զօրքն զօրագլուխն Ալի փաշա և գնայր ի Մաճար։ Եւ այգուցն Զշի (6 Ապրէլ) առաւօտու առողջանայր վէզիրն եւ մեծ տիւանս առնէր։ Եւ զդեսպանն Լէհայ խիլայեաց, ընդ նմին և զԵ արանց[1]) ևս զգեցոյց կա-

1) առն.